

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հոյ 8 ՄԷԸ
Յ Գաւառաց 10 ՄԷԸ
Վ Կապուսայ Կ. Պոլսոյ 4 ՄԷԸ
Յ Գաւառաց 3 ՄԷԸ
Եւրոպայի թերթի գին 60 փոյ
Կապուսայի տողը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուրուշ, աւելի անգամներու
համար դատ սակարկութիւն կը լինայ:



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 24 ՀՈՒՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Նաւ Եօրը 4 նոյ.
Արեւմտեան քաղաքացիական, որոյ քով
էին Պոլսոյ իշխանին փնտռել տուած
թուղթերը, Պոլսոյ դարձած միջոցին գլու
նուեցաւ:

Փարիզ 2 նոյ.

Բա—Տը—Գալէի մէջ եղած երկրորդ
քուէարկութիւնը Պոլսոյ իշխանին ընտրե-
լին նպատակաւ արդիւնք տուաւ տասն
հազար ձայնից առաւելութեամբ:

Վիեննա 2 նոյ.

1860 ի փոխառութեան պարզեցնե-
լուն վիճակահանութիւնը կատարուելով
առաջին վիճակը 4903 սկիւն 46 թիւը
շահեցաւ, երկրորդին ալ 49667 սկիւն
40 թիւը:

Գալէ 2 նոյ.

Պ. Տըլիս Անկրան պահպանողական
ազգային երեսփոխան ընտրուեցաւ:

Պոլսոյ 3 նոյ.

Տոն Գարուսի եղբայր Տոն Ալֆոնս ըլ-
պանիւնը մեկնեցաւ Աւստրիա վերա-
դառնալու համար:

Լոնտոն 3 նոյ.

Պոլս. Բոնա. 45 5/8
Քաթ. 4863
» 4869 51 3/4
» 4874 —
» 4872 84 3/4
» 4873 53

Նոր փոխառութիւն 2 1/8
Անգլ. Բոնա. 93 1/4

Վիեննա 3 նոյ.

Բաւարիա Միտլենկ—Օրիէն 8 1/8—1/4
» Ֆայր Տօլէրա 5 1/8—1/4
Շախտ ամ 12000 հաւ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ

Եանեսայի կուսակալ Մուսթաֆա
Ասիմ փաշան Ափրիկեան Տրիպոլիոյ
կուսակալ անուանեցաւ փոխանակ
Սամիհ փաշային, որ Պետական խոր-
հրդից անդամ անուանեցաւ:

Իւսթինայի կուսակալ թիմուր
փաշան Կեսարիոյ կուսակալ անուա-
նեցաւ:

Մայրաքաղաքի Պարսից դեսպան
Միրզա Մոհսին խան իւր բնակութիւ-
նը Գուրուշէմէէն Կ. Պոլսի փոխադ-
րելու առթիւ 15000 հօսոյ ամուսի
բաշխել տուաւ Գուրուշէմէի աղքա-
տաց առանց ազգի և կրօնի խտրու-
թեան:

Թղթատարութեան պաշտօնա-
րանին երկրորդ տեսուչ Մուրատ
Մուսթաֆա Ստեփան Էֆէնտիլին հա-
մար հրատարակեցաւ թէ իւր պաշ-
տօնը չարաչար դուրս ածելուն պատ-
ճառաւ արձակուելու է. բայց հիմա
կըլենք թէ յիշեալ անձը մինչև այ-
սօր պաշտօնին դուրս կը գտնուի
մեծ դժգոհութիւն հասարակութեան:

Ափրիկեան Տրիպոլիոյ բնակչաց
գլխաւորներէն 11 հօգի կերակի օրը
մայրաքաղաք հասան երկիրն բը-
նակչաց կողմէն Բ. Գրան խնդրագիր
մը ներկայացնելու համար, որով կալ-

ւածական նոր տրոյ նուազումը կը
խնդրեն:

Յիշեալ պատգամաւորները բըն-
նուելով ստորիկանութեան գումար
բանաւորեցան:

Լէվենթ Հէրբէտ լրագրիւ կը ծա-
նուցանէ թէ Սերիոյ գաւառին մէջ
գտնուած բողոքականաց դպրոցնե-
րը դոյնելու հրաման եղեր է:

Կիրակի օրը Անգլիական շուգե-
նաւ մը Մարմարայէն Բոսփորի նե-
ղոցը մտած ժամանակ Գըզ—գուլէ-
սիի առջև Բադար—Գալլի մ'ընկը-
մեց, և առանց մէջի մարդոցն օդ-
նութիւն ընելու ճանքան շարունա-
կեց. հետեւաբար ընկղմեալ նաւուն
մէջի մարդոց ամենն ալ ծովակուր ե-
ղան:

Կիրակի իրիկուն ժամը չորսին մի-
ջոցները մայրաքաղաքի հրդեհա-
դոյժ պահապանները թօփ գափու
կրակ կայ գոցեցին, բայց յետոյ ըս-
տուգուեցաւ որ հրդեհը Գիւլիւնք
Չէքմէճէ էր, և հոն աղաւթակի մը
յարգանքն այրեր է:

Երեքշաբթի իրիկուն ալ ժամ 2
1/2ին Մարմարա հրդեհ պատահելով
9—10 տուն այրեցան:

Այս գիշեր ալ ժամ 7ին միջոցնե-
րը Գանտլիկ հրդեհ պատահելով եր-
կու տուն այրեցաւ:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԵՍՏԱՄԱՐ ՈՒՄՈՒՄԻՆԷ

23 հոկտ. չորեքշաբթի իրիկուն 50.14
24 հոկտ. հինգշաբթի առաւօտ 50
բացուեցաւ 50 02
կէս օր

Կ. Պոլս. 23 հոկտ.

Սօսիթէ ժէնէրալի բաժինը Անգլ. Կ. 7 30
« փոխանակութեան » 5.17
Կ. Պոլսոյ Պանքային » 6
Քրէտի ժէնէրալ » 12 20
Քրէտի Ոսթրո—թիւրք
երկաթուղիայ հիւն » 430

Փոլս. 4863 » 348
» 4865 » 336
» 4869 » 276
» 4872 » 84
» 4873 » 264
Թրաքուի Ե. Ոսթ. իւր 4 80

ԲՆԱԿԱՐ ԳՐԱՐՈՑ

23 ՀՈՒՏԵՄԲԵՐ

Անգլ. Կ. 409.46
Նաւաւ. Կ. 87 40
Կաթ. Կ. 89 40
Գլորիոյ Կ. 51.43
Հինգ Գրանք » —
Հինգոց » 404 30
Պրինձ » 428

Ա. Ա. Ա. Ա. Ա.

Պատուարժան ազգային մը Լենկի-
րէն եկող ընտանիքի մը քով գլու-
նուած տեսակ մը նիւթ բերաւ ցոյց
տուաւ մեզ ըսելով թէ երկիրն սո-
վաւանջ ժողովրդեան կերած հացն է

եղեր և օխան եօթն զըշի կը ծախ-
ուի եղեր:

Ստուգիւ սարափի եկաւ վրանիս
այն տարօրինակ նիւթ տեսնելով,
որ հաց ըլլալէ այնչափ հեռի է որ-
չափ քարը ջուրէն, կամ երկաթը
բամպակէն: Եւ աւելի ստուգիւ զգա-
ցինք երբ յիշեալ ազգային հա-
տատեց մեզ թէ յետոյ ասիէ սարա-
փինները կերած են իրիւ հաց, և
այն ալ օխային 7—8 զըշ վճարե-
լու կարողութիւն ունեցողները մի-
այն. իսկ չունեցողներն այդ տար-
փինակ հացէն ալ զուրկ մնալով փո-
ղոցներն ու դաշտերն ինկած են խոտ,
կեղեւ, ճճի և այլն ուտելու:

Ասիէց կրնայ ամեն մարդ երեւա-
կայել աղքատ սովեղաց վիճակին քրտ-
մինքնի դառնութիւնը:

Կըլսենք թէ Հանգանակութիւն
հաւաքող ազգային յանձնաժողովը
սովեալ գաւառաց ազգային ժողով-
ներէն հեռագրով տեղեկութիւն ինդ-
րեր է, որ ըստ այնմ դրամ կամ ար-
մաթ զրկէ հեռագրէ:

Կըլսենք նաեւ թէ Ս. Պատրիարք
Հայրն ալ սովի նեղութիւն չկող դա-
ւառաց առաջնորդներուն ու ազգա-
յին ժողովոյ հրաւեր ըրեր է հե-
ռագրով, որ սովեալ ազգայնոց օդ-
նութեան համար հանգանակութիւն
բանան կամ արմաթ հաւաքեն: Նոյն-
պէս հեռագրով խնդրեր է Ամենայն
Հայոց Վեհ. Կաթողիկոսէն որ Ուստի-
ոյ մէջ հանգանակութիւն բանալով
օգնութիւն զրկէ սովեղաց:

Սիւս լրագրին առանց դատաւո-
նի խաղաղութեան և թաւարոնի ալ նոյն-
պէս առանց դատաւոնի երկամա-
նայ գաղաւթումն ամենուն ցաւ պատ-
ճառեց:

Ազգային վարչութիւնն ամիս մ'
առաջ Սիւս լրագրին համար գան-
գատ ըրած է եղեր առ Բ. Գուռն,
բայց իմացածնուս նայելով, թաւ-
րոնի համար գանգատ ըրած չէ
եղեր: Եւ որովհետեւ թաւարոնի դա-
ղաբանն հրամանագրին մէջ ըստած
է թէ Կրօնական ժողովոյ գէմ չա-
փաղանց լեզու դոյնածաւած ըլլա-
լուն համար գաղաւթումն կենթարկի,
մինչդեռ թաւարոնի մէջ այդպիսի
լեզու մը տեսնուած չէր Կրօնա-
կան ժողովոյ գէմ, վարչութիւնն ե-
րեքշաբթի օրը քննութիւն ըրաւ և
ստուգեց, որ ո՛չ Գաղաքական ժողո-
վոյ, ո՛չ Կրօնական ժողովոյ, ո՛չ ալ Ս.
Պատրիարքին կողմէ ուղղակի կամ
անուղղակի գանգատ մ' եղած է
թաւարոնի համար: Հետեւաբար Գա-
րու Բէհհարի Էֆէնտիլին պատուէր
արուեցաւ որ անյապաղ Բ. Գուռն
երթայ և թաւարոնի գէմ Պատրիար-
քարանի գանգատ չունենալը յայտ-
նէ առ օր անկ է:

Հաւատարմով որ վարչութեան այս
յայտարարութիւնն անկեղծ է, սի-

ՊԱՅՄԱՆՔ

Գուռն գացած լրագրաց ճան. ու
նայալը թմբադուլեալ պատճառ:
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ եւ ինչ գործիւն թմբադիւր
—Տնօրէնին պիտի ուղղուի, Կ. Պո-
լս., Չիքիլի խան, Մարտի գրասեն-
եակը:

Համբու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր:

Երկր է մեզ յուսալ որ թաւարոնի
գաղաւթումն պատճառ չունով կ'ըր-
ջանայ կայսերական կառավարութեան
արդարաւէր խնամոյ շնորհիւ:

Իսկ Ասիայի խաղաղութեան գալով կը
ցաւինք որ վարչութիւնն ամբարո-
յականութեամբ ամբաստանեալ ե-
կեղեցականի մը նկատմամբ Սիւս ը-
րած ծանր հրատարակութիւնները
գանգատի նիւթ ըրած ժամանակ,
ուրիշ բարձրատիման եկեղեցականի
մը գէմ լրագրաց օմանց ըրած ան-
լուր հայհոյութիւններուն և պոգա-
լի թշնամանաց աչք դոյնելու տխուր
տեսարանը կընծայէ, որ, ներուր մեզ
ըսել, անաչառ արդարաւորութեան
փորձ մ'ըլլալէ հեռի է:

ՈՒՆԻՆԴՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՆԻՆԷ

(Շուր. Դեմ. Բէ— 1599)

Մինչև ցայժմ Բեհհար, Ժողովոյ նիս-
տերու առեւ տեղի ունեցած անկար-
գութեանց պատճառն ու երկ ժողո-
վրդեան իր բողոքն օրինաւոր կերպով
ներկայացնել չգիտնալն է, քան թէ
այլ ինչ: Եթէ մեք երեսփոխանք մի-
խանակ անձնական կրից և կուսակ-
ցական շահուց թեւադրութեամբ
չարժեքու և մեր անտարբերութեամբ
բնն ու պարտաւանջութեամբ ժո-
ղովրդին իրաւացի կամ անիրաւ տըժ-
գոհութիւնն օրէ օր աւելի արծար-
ծելու, խոհական զգուշութեամբ ջա-
նացած լինէինք ամեն առթիւ բա-
ցատրել ժողովրդեան թէ իր բողոքը
իրաւացի կամ անիրաւ՝ նկատողու-
թեան պիտի առնուի, և յիշուի ալ
ժամանակին նկատողութեան առած
և որոշումն օրինաւոր կերպով ի-
րեն ծանուցած ըլլայինք, այն անկար-
գութիւններն ալ տեղի չէին ունե-
նար և մեր խիղճն աւելի հանգարտ
կըլինէր: Շատ անգամ երբ մարդ
խղճի խայթ կամ գառապարտու-
թիւն կըլլայ, ինքզինք այլց և մա-
նուանք իր խղճին առջև արդարա-
ցընելու համար՝ ճիշդ կընէ իր յան-
ցանքն ուրիշ վրայ բաւանաւորելու:
մեք երեսփոխանքս ալ ճիշդ այդպէս
վարուեցանք. մեր կըքերէն և մա-
նուանք մեր ազգայնութենէն, անհո-
գութենէն և անփորձութենէն ա-
ռաւ եկած անկարգութիւնները ժողո-
վրդեան կամ անոր մէկ մասին չա-
րակամութեամբ տուինք: Գիտենք
որ կուսակցութիւն մը կամ մանաւոր
անձ մը որ և նպատակով կարող է
քանի մը ազգաւ կամ խռովաւէր մար-
դիկ իրեն դուրսը ընելով ժողովին
մէջ անկարգութիւն ընել տալ, բայց
երբ ժողովն իր խոհական և անկեղծ
ընթացքով ժողովրդեան վատհաւ-
թիւնն ու համակրութիւնը գրաւած
է, կարող է ապահով ըլլալ որ ժողո-
վուրդն ինք գառաւաղ կը կանգնի
և մէկ հարուածով արմատախիլ կընէ

իր մէջէն չարութեան որոմը : Երբ
Ընդհ. ժողովը մէկ նիստին՝ Մշեցի մը
հեղափոխիչ և բարեփոխիչ և արդարեւ
թերազգայնութեամբ մեզ դէմ յար-
ձակեցաւ կատարաւ, ժողովուրդն
ակնթարթի մը մէջ լռեցուց զայն և
գուր հանեց : Երա հաւանական է
որ Մշեցիին մինակ չէր, ընկերներ ալ
ունէր, բայց ժողովը կան արդար
ցատումը զամենքն ալ զգաստացուց :
Քոստաներէս սա կը հետեւի որ եթէ
ժողովուրդն երեսփոխանական ժողո-
վին կողմն է, կուտակցութեան մը կամ
մասնաւոր անձանց յարուցած գրգռ-
ութիւնները բնաւ կարեւորութիւն
չեն ունենար : Բայց երբ ժողով և ժո-
ղովուրդ իրարու վրայ կանխածոտ աչ-
քով կը նային, երբ ժողովը զժողո-
վուրդ և ժողովուրդն ալ զժողով իրա-
րու թշնամի կը նկատեն փոխադար-
ձաբար—այն ատեն ամեն տկար կու-
տակցութիւն, ամեն չնչին մարդիկ կա-
րող են մեծ դեր խաղալ և մեծ վը-
նաս հասցնել ազգային հանրական
չահերուն : Եւ երբ այդպիսի աղետալի
վիճակի մը մէջ ժողովը փոխանակ իր
մէջ փնտաւրու իրաց դարձանք, այ-
սինքն՝ փոխանակ իր խոհական ար-
դարատէր և օրինատէր ընթացքով
իր կորսնցումը փարկն ու արատաւ-
աւելի դիւրքը վերադառնալու և բերել
ջանալու՝ արհամարհող բռնակալու-
թեան մէջ փնտռել զայն—այն ատեն
այդ ժողովը՝ Մահմանադրական կեղծ
անուան տակ՝ բազմաբնու բռնա-
պետութիւն մը կը լինի, որ բռնապե-
տութեանց ամենէն ահաբեկին, ամե-
նէն վնասակարն և ամենէն վրտան-
գաւորն է :

Այո՛, բարեկամք, չխրաչխի՛ր ժո-
ղովուրդէն երբ մեր ընթացքն անկեղծ
և նպատակը բարի է : Երբ քեզ ժո-
ղովուրդեան իրաւունքը, արձակ հա-
մարձակ ընենք մեր նիստերը ժողո-
վրդեան ներկայութեանը, երբ դըւ-
նալին ունենողաց մէջ մարդիկ, որք
անըարեմտութեամբ կամ ագիտու-
թեամբ անհասկնալի ընեն զմեզ, այն
ատեն ամենայն հաստատամտութեամբ
և ամենայն հանդուրժողութեամբ խղճի
պարտ ու պատշաճ միջոցներն ի գործ
դնենք յանցաւորաց դէմ, բայց քա-
նի մը հազիւ պատճառաւ ժողովուր-
դեան արժանապատուութեան զգա-
ցումը չլիքաւորենք, անոր իրաւուն-
քը չբռնաբարենք, մեք որ մեր իշ-
խանութիւնն անկէ ընդունած ենք :
Լուսաւորեալ տէրութիւնք ճանչցած
ենք արդէն թէ ինչ մեծ նշանակու-
թիւն ունին ժողովը հրապարակային
նիստերը ժողովուրդեան մտաւոր եւ
քաղաքական զգացմանցը համար, և
օրէ օր ամեն տեսակ ժողովուրդ և առ-
եաններու գոյ դռները կը բանան
ժողովուրդեան առջև : Թէ և անոր մը-
տաւոր և բարոյական զարգացմանը
ծառայող ուրիշ հարկերաւոր միջոց-
ներ ալ ունին : Մէք որ այդ միջոց-
ներէն գրեթէ և ոչ մէկն ունինք
դեռ, Ընդհ. ժողովը դռներն ալ չը
գոցենք . . . Գիտեմ, շատեր կըսեն
թէ այդ ժողովն կուր կրնայ սովորի
ժողովուրդն և ո՛չ այլ ինչ : Այդպի-
սիներն ազգաց յառաջադիւնութեան
օրէնքներուն այդ ուրէն ինչ անդամ
անապեղեակ՝ ամեն բան անոր իրենց
վրայ գործած անմիջական ակնորժ-
կամ անախորժ ապաւորութեանը
վրայ կը չափեն, և պատճառի մը հե-
ռաւոր հետեւանքները չեն կարող
նշմարել և ըմբռնել : Ընդհ. ժողովն
իր ներկայ վիճակին մէջ շատ մեծ
կրթիչ և զարգացող ազդեցութիւն
կարելի է չունենայ իր ունեցողաց վը-
րայ, բայց ամեն մարդկային գործ ի
սկզբան անկատար կը լինի և երթալով
կ'կատարւի ազգործի . . . միայն զիստ-

ուած կըդաւանենք կատարելով յա-
ւիտենից :

Մէք երեսփոխանքս սովորու-
թիւն ունինք երկու խօսքէն մէկն ը-
սելու թէ Ընդհ. ժողովն ազգին պա-
տասխանատու է : Եթէ ճշմարիտ է
յայտարարութիւննիս, դարձեալ կը-
սեմ ուրեմն, բանանք ժողովը գըւ-
նենք և արձակ համարձակ ընենք
նիստերնիս, եթէ ընթացքնիս ան-
կեղծ է և նպատակնիս ուղիղ : Ան-
նապարտութեան հրապարակութեամբ
համարաւորութիւնը շատ թերի է
զանազան պատճառներով : Ընթեր-
ցողը զատենաբանը չտեսներ, անոր
չարժուածքները և գիտաց գծերուն
զանազան ճիւղերը բացատրող խաղը
չըդիտեր, անոր ճայնին արտայայտած
սրտի այլ և այլ յաղմուքը չըսեր :
Յետին տղէտն ալ գիտէ թէ շատ ան-
գամ մարդիկ բանի մը համար ճերմակ
է կըսեն, բայց այնպիսի եղանակով մը
կըսեն որ ճիշդ անոր հակառակը կը
հասկնային : Աննապարտութեան մէջ
կը կարգաւ որ այս ինչ երեսփոխանն
այս ինչ խնդրոյն ի նպատակ խօսեր է :
Բայց ներկայ եղողը գիտէ որ իր խօ-
սքերը խնդրոյն աննպատակ արդիւնք
ունենցան, և թէ իր նպատակն ալ
ճիշդ էր : Երեսփոխանի մը խնդրոյ մը
թեր կամ դէմ լինելը շատ անգամ ա-
նոր մէկ նպատածքն է, մէկ շարժու-
մէն, մէկ բացառանշու թեմէն կամ
ընդմիջումէն կը հասկնային : Կարելի
է ըսենք մեզ թէ ուրեմն համարաւոր-
ութիւնը կատարելով լինելու համար՝
պէտք է որ բոլոր ընտրողք անձամբ
ներկայ լինին ժողովը նիստերուն, և
որովհետեւ այդ անկարելի է, ուստի
և անոնց մէկ մասին ներկայութիւնն
ալ աւելորդ է կամ անիրաւութիւն
բացակայից դէմ : Այո՛, անտարակոյս
բոլոր ընտրողաց ունեցողութեամբն
է որ համարաւորութիւնը կատարելով
կըլայ ըստ սկզբան, բայց ասիկէ ձեր
համար հետեւութիւնը չընենք, չհե-
տեւեն իր թէ ժողովին գործերը գոյեղու
է կամ գոյեղուէն ո՛ր առիթով քննու-
նուէր, այսինքն ունեցողաց թիւն քա-
ղաքային շարժումներու է : « Ժողովը ին-
ունեցողութեան իրաւունքը լիովին
վճարված է ատենադրութեանց հը-
րատարակմամբ »՝ կըսենք, և այդ
իրաւ է բացակայ ընտրողաց նկատ-
մամբ : Իսկ անոնց նկատմամբ որ ժո-
ղովը նիստերուն ներկայ գտնուելու
բնական անկարելիութիւն չունին,
անիրաւ է և արդար իրաւանց բռ-
նարարութիւն : Եթէ իրաւի ազգին պա-
տասխանատու ըլլալին կընդունինք
և մեր պաշտօնին անթերի կատա-
մանը վրայ փառհ ենք, չը սեղմենք
ունեցողաց թիւը — և այն կամայա-
կան կերպով — այլ ընդարձակենք
զայն մեր ձեռքէն եկածին չափ, որ-
պէս զի ժողովն թէ՛ իր կրթական նը-
պատակին ըստ կարելոյն հասնի և
թէ՛ իր համարաւորութեան պարտ-
քը ըստ կարելոյն անթերի վճարած
ըլլայ : Որովհետեւ բոլոր ընտրողնե-
րն իրենց երեսփոխանաց վրայ ան-
միջական հսկողութիւն ընել չեն կա-
րող, պէտք է որ գէթ այն ընտրող-
ներն ի գործ դնեն այդ իրաւունքը,
որք ընական արգելք չունին զայն
գործադրելու : Ժողովին պարտքն է
ամեն միջոց ի գործ դնել որ այդ ի-
րաւանց գործողութիւնը կանխա-
ւոր և վայելելու եղանակաւ ըլլայ :
Ուստի բացատրենք թէ ժողովն ինչ
միջոցներ ի գործ դնելու է որ թէ՛
ինքն իր պարտքը կատարած և թէ՛
ժողովուրդն իր իրաւունքն օրինա-
ւորապէս վայելած ըլլայ :

Եթէ Ընդհ. ժողովը գումարման

* Տես Երեսն. Գ. 91 :

տեղն այնպիսի քաղաքի մը մէջ ըլ-
լար, ուր հազիւ 200—300 ընտրող
գտնուէր, ժողովարանն անոր համե-
մատ ընդարձակութիւն կունենար :
Բայց երբ ժողովարանն այնպիսի քա-
ղաքի մը մէջ հաստատուած է, ուր
հազարաւոր ընտրողներ կան, պէտք
է որ իր պարունակութիւնն ալ հա-
մեմատաբար մեծ ըլլայ : Այնպիսի
քաղաքի մը մէջ ժողովն իրաւունք
չունի այնպիսի տեղ մը ընել իր նիս-
տերը, ուր հազիւ 200 հոգի կարող
են հանգիստ ընել : Ընդհ. ժողովն
պարտքն է Պոլսոյ մէջ գտնուած ա-
մենէն ընդարձակ եկեղեցին այսինքն
Գումիստիկի Մայր Եկեղեցին գու-
մարուիլ : Այդ եկեղեցին քանի ուն-
կենդիր որ կարող է պարունակել
նոյնչափ ամանակ տպել տալ : Տոմ-
սակներուն մէկ մասն երեսփոխանաց
յանձնել, այսինքն իւրաքանչիւր ե-
րեսփոխանի մէկ կամ առաւել եր-
կու ամանակ խելել հրաւիրողին
հետ : Բացած մասն ամբողջապէս
ժողովուրդեան բաժնել սա կերպով :
Ժողովը բացումէն 3—4 ժամ առաջ
եկեղեցւոյն դռնից յատուկ մարդ
մը դնել որ տոմսակները կարգաւ մէ-
կիկ մէկիկ ապ, հրահանգ առ ի-
րեն որ փոքր աղայոց ամանակ չապ-
նային և մէկ հոգիի մէկէն առելի
ամանակ տալէ զգուշանայ : Եթէ տոմ-
սակներն սպառին, յայտարարէ թէ
ալ տեղ չկայ, ժողովը բացումէն
գէթ կէս ժամ առաջ բարապանք
պէտք է ամանակ ունեցող ունեցողի-
ները ներս թողուն մէկիկ մէկիկ : Ե-
թէ առանց ամանակի ներս մտնելու
ճիշդ ընտրող գտնուին, մարդավա-
րի և մեղմ կերպով բացատրեն ա-
նոնց թէ այդ արգելեալ է նոյն իսկ
ունեցողաց իրենց հանգստութեանը
համար, և յորդորեն որ եթէ ժողո-
վը նիստին ներկայ գտնուի կը փո-
փաքին, թող գալ նիստին ժամ ա-
ռաջ ամանակ առնելու փայտ ընեն :
Առջի բերան կարելի է բռնի ներս
մտնելու փորձ փորձողներ գտնուին,
բայց համոզուած եմ որ երբ ժողո-
վուրդը փորձով հասկանայ որ այդ
կարգաւորութիւնը նոյն իսկ զինքը
յարգելու և իր ունեցողութեան ի-
րաւանց գործադրութիւնը դիւրա-
ցընելու և կանխաւորելու համար ե-
ղած է ժողովը կողմն, հետեւութիւնք
հազիւ երբեք տեղի կունենան :

Ժողովը դիւանը պէտք եղած
հսկողութիւնն ընելու է որ ամանակ
բաժնողին կամ բարապանին կողմէն
անիրաւութիւնք տեղի չունենան :
Տոմսակ բաժնողը կարող է մէկուն
ամանակ չափիք ընել՝ սպառեցաւ
ըսելով և ամանակներ պահելով իր
բարեկամաց տալ կամ վաճառելու Բա-
րապանք ալ կրնան առանց ամանակի
մարդ ներս թող տալ բարեկամաբար
կամ ստակով :

Ժողովարանին մէջ յատկացեալ
տեղ ունենալու են միայն ուղղակի
երեսփոխաններէն ամանակ՝ ստացող
անձինք և ազգային խմբագիրը :
Լաւ կըլլայ որ սոցա համար մէկ եր-
կու գրասեղան ալ պատրաստուի :
Ժողովը կանոնադրութեան 9½ յօդ-
ւածը կըսէ. « Վերնատունը տիկնայց »
յատկացեալ է : Ընդունինք այս բա-
ժանումը, զի այս երկրին մէջ դեռ
չտեսնուի չեն կարող առանց « Երես-
նի » և « Երեսնի » ընկերութիւն երեւակա-
յել : Բայց անմիջապէս ասիկէ եկած
պարբերութիւնն ընդունելու հարկ

* Պէտք է որ երեսփոխանաց ամանակ-
ները կամ միւսներէն տարբեր լինին կամ
իրենց ստորագրութիւնը կրեն :

** Երբ ընտրողութիւնն իր իրաւունքն
ունենալու և քննարկելու որ հայ առ-

չկայ, (բայց լրագրագետաց վերա-
բերեալ տրամադրութիւնն) : « Գաւառ »
եկեղեցական ունեցողաց, գաւառա-
կան և թաղական ժողովականաց և
խորհրդականաց, նախկին երեսփո-
խանաց, ազգային լրագրագետաց
և պատուաւոր օտարազգեաց յատ-
կացեալ է : » Կրօն այդ պարբերու-
թիւնը երբ ընդունինք թէ ուղղակի
երեսփոխաններէն ամանակ՝ ստացող
ունեցողիք յատկացեալ տեղ ունե-
նան, խնդիրն ինքնին կը լուծուի :
պարբերութեան մէջ համարած եկե-
ղեցական և աշխարհական ունեցող-
ներն են թէ ուղեւ գառ նստիլ, կարող
են ամանակի համար երեսփո-
խանաց դիմել :

Ընդհ. ժողովը վերջին նիստը թէ և
դռնեաց էր, բայց դռնիցէ տար-
բերութիւն չունէր՝ ամանակաւ մուտ-
քը թիւր կերպով կարգաւորուած լի-
նելով : Կուղեւ ամեն բանի բարի և
նպատաւոր մեկնութիւն տալ, բայց
ինչպէս չցաւի՝ երբ այնպիսի կար-
գաւորութիւնք տեղի կունենան, որք
յուզեալ մտքերն առելի դժգոհել և
Ընդհ. ժողովը վարկը ժողովուրդեան
առջին նուազեցնելէ զոտ ուրիշ բա-
նի չեն կարող ծառայել :

Փախարկելու է որ ժողովուրդեան
ունեցողութիւն իրաւունքը գալ
նիստին ալ նոյն կերպով չիրաւարա-
րուի հակառակ նոյն իսկ ժողովը կա-
նոնադրութեան իմէ դռնիցի նիստ
ընելու ստիպողական հարկ կայ, պէտք
է ժողովին իրեն օրինաւոր որոշմամբ
լինի՝ կանոնադրութեան 29 յօդուա-
ծին համաձայն և ոչ թէ խտորնակ
միջոցներով :

Միանգամ ընդ միշտ հասկանալու
է որ ամենէն ազգօգուտ ընթացքը
պարզ և անկեղծ ընթացքն է, և
իշխանութիւն մը եթէ իւրօր ժողո-
վրդեան բարոյն կուղեւ ծառայել,
այդ սկզբունքով ներշնչուած և տու-
գորուած ըլլալուն են իր ամեն կար-
գաւորութիւնք : Հ. Իսկէն

18 հոկտ. 1874 խաղալու

... Խաղալու Մասիս պատուա-
կան լրագրող :

Կը խնդրենք, եթէ արժան գա-
տիք, բարեհաճեցէք ներփակեալ
յօդուածս ձեր պատուական թերթին
էջերուն մէջ հիւրընկալել :

Ընդունեցէք զիս, տէր, ձեր ե-
րախապարտ և անձնուէր . . .

74 հոկտ 16/28 Ա. Ա. Սաբին
Կ. Պոլիս

Բուսական ժամանակ կայ որ ազգա-
յին վարժարանաց մէջ շաբաթը ընդուն
ըստ կարելոյն դիւրաւ ուսուցանելու
ջանքը գրեթէ ընդհանրացած է մեր մէջ
և հայկաւրան ուսուցիչը կաշկարան իւր-
եանց դաստիարակութեան առարկայն քե-
րականութիւնը համարակցող բերմունքի
և օգտակար ընել :

Այս դովելի նպատակն իրաւորժեշտ
համար ընտրուած միջոցներուն լաւա-
դոյնն համարուած էր՝ քերականութեան
ուսուցը, ցարտ ու ցարտ տեսականութեան
թիւնն Գործնական վիճակի վերածել :
Պ. Ա. Մ. Գարագաթեանի, Պ. Ե.
Մուրադեանի և մօտ օրերս ալ մեր հը.
րատարակած Գործնական քերականութեան
թիւնը ահա այս ջանից և աշխատութեանց
արդիւնքը կը համարուին :

Սակայն հայերէն լեզուի ուսուցման
համար պատրաստուած քերականութեանց

կիներն ալ մարդու տեղ դրեր է . . . այո՛,
թող հայ տիկնաներն ալ սովորին ազգային
խնդիրներու զրազիլ՝ զէթ իրենց գա-
ւակայ կրթութեանը համար : Դատեր
կարելի է ծիծաղին կանոնադրութեան պա-
տրամադրութեանը վրայ, բայց մենք
քաղցր յոյս կըտեսնենք թէ հայ տիկնանե-
րն որ մ'ալ մեզի հաւասար ըլնել իրա-
ւունք կ'ստանան . . . :

